

Նարինե Հ. Դիլբարյան
Բանաս. գիտ. թեկնածու

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՅՈՒ «ԱԴԱՄԳՐՔՈՒՄ»

Դրախտից դժոխք, ապա վերստին դրախտ ճանապարհին*

**Զայս մեր ասեմք նոցա յանցեալն,
Եւ մեզ խրատ ի հանդերձեալն,
Ջի որ տեսցէ զչար պատահեալն,
Վասն իւր հոգոյ տարակուսեալն¹:**

Բանալի բառեր – Առաքել Սյունեցի, «Ադամգիրք»
դյուցագներգական պոեմ, բառապաշար, հելլենիզմ,
քրիստոնեական մշակույթ, բառակերտում, հոմանիշ-
ներ, նորակազմություններ, փոխառություններ, ա-
ծանցում, բարդություններ:

Առաքել Սյունեցին 14-րդ դարավերջի և 15-րդ դարասկզբի հայոց մշակույթի և գիտության բազմաշնորհ գործիչներից է, որը թողել է պատկառելի գրական և գիտական ժառանգություն: Նրա կենսագրության մանրամասները դեռևս բանասիրական բանավեճերի տեղիք են տալիս: Ըստ ընդունված տեսակետի՝ նա պետք է ծնված լիներ 1350 թ. և վախճանված 1425 թ., բայց Սյունեցուն նվիրված իր վերջին հետազոտության մեջ Ա. Մադոյանը վիճարկում է մահվան տարեթիվը, քանի որ գտել է ձեռագիր մի հիշատակություն, որտեղ նշում կա 1431 թ. Նորավանքում Սյունեցու գտնվելու վերաբերյալ: Հետևաբար նրա մահվան թվականը պետք է տեղափոխել 1431 թվականից հետո: Սյունեցու «Ադամգրքի» քննական բնագրերը կազմած և հրատարակած Ա. Մադոյանն ընդգծում է, որ աշխարհով մեկ սփռված նրա ձեռագրերի նյութը դեռևս ամբողջությամբ հրատարակված և, ամենակարևորը, ի հայտ բերված չէ, հետևաբար Սյունեցու մեծ ժառանգությունը հանգամանալի մեկնաբանության ու վերլուծությունների կարող է ²:

Առաքել Սյունեցին իր ժամանակի ամենակրթված այրերից է եղել,

*Հղվածն ընդունվել է տպագրության 31.01.2015:

1 Սյունեցի Ա., Ադամգիրք, Աշխատասիրությամբ Ա. Մադոյանի, Եր., 1989, էջ 196:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 3-4:

ուսանել է Տաթևի համալսարանում՝ իր քեռու՝ Գրիգոր Տաթևացու մահվանից հետո դառնալով ուսուցչապետ: Նրա գործունեության բնագավառները բազմաթիվ էին, կարողությունները՝ անսպառ. Սյունեցին բանաստեղծ էր, փիլիսոփա, աստվածաբան, քերական, մանկավարժ և երգահան:

Սյունեցու ստեղծագործությունների մեջ մենք առանձնացրել ենք նրա «Աղամգիրք» դյուցազներգական պոեմի բառապաշարը: Քերթվածն իր բովանդակությամբ և ձևով հույժ առանձնանում է Սյունեցու գրական ժառանգության մեջ: Այստեղ ամենից ավելի է երևում մարդկային հոգեբանության խորքերը թափանցելու հեղինակի կարողությունը, կյանքի փիլիսոփայական ընկալման ոգին: Գոյի սկզբնակետը, Սյունեցու համոզմամբ, երջանկությունն է, որը խաթարվում է զանցանքի պատճառով, զանցանքին հետևում են օրինաչափ պատիժը, ապա՝ տառապանքը, բայց եթե պատժին հետևել է գղջումը, վախճանակետը վերստին երջանկությունն է: Կյանքի էքզիստենցիալ շղթան Սյունեցու ընկալմամբ ողբերգական չէ, այլ բարին հաստատող: Կյանքը բարու և չարի անընդմեջ պայքար է, որը, սակայն, ոչ միշտ է ավարտվում բարու ակնհայտ հաղթանակով. այս հակասությունն անդադար մտահոգել է Սյունեցուն: Նա 1407 թ. արդեն Սյունիքի արքեպիսկոպոսն էր և ստիպված էր պայքարել մարտնչող անհավատության կամ թերահավատության դեմ, որը բավական տարածված էր լեռնային տարածքների բնակիչների շրջանում, որտեղ կյանքն անդադրում պայքար էր հանապազօրյա հացի և հայրենի հողի համար, ամենօրյա բախում չարիքի հետ, ուստի հավատը երկնային արդարադատության հանդեպ խամրում էր: Սյունեցին իր գրական երկերով և քարոզներով ձգնում էր համոզել դժվարին կյանքով ապրող իր թեմին, որ կանխակալ երջանկության կորուստը և դրան հաջորդած տառապանքը հավերժական չեն, այլ անցողիկ: Անկեղծ գղջման և առաքինի կյանքի վերջում մարդը միշտ պարգևատրվում է առավել բարձր մակարդակի նոր, աստվածաշնորհ երջանկությամբ: Երջանկությունը տրվում է հենց այս աշխարհում և ոչ միայն հանդերձյալ կյանքում: **Բացի «Աղամգրքից» Սյունեցին հեղինակել է նաև «Դրախտագիրքը»՝ այսպիսով ավարտելով դրախտից մինչև երկիր, ապա հետ՝ դեպի դրախտ տանող գոյաբանական շղթան: Այն դրախտը, որը երկրի վրա է և երկնքում միաժամանակ:**

«Աղամգիրքը» գրված է Հոմերոսի «Ոդիսականի» ոգով, հելլենիզմի և քրիստոնեական մշակույթի բարձրագույն արժեքների յուրօրինակ համադրմամբ: Հինք ունենալով Հին կտակարանի Ծննդոց գրքի ավանդագրույցը մարդկային առաջին զույգի և առաջին մեղքի վերաբերյալ՝ Սյունեցին յուրովի հյուսել է Ադամի և Եվայի պատմությունը, նրանց արարումը, ըմբոստացումը Աստծո պատվիրանի դեմ և վերահաս ողբերգության հանգուցալուծումը: Այս գիրքը, որը հայտնի է իր երեք խմբագրություններով (պայմանականորեն՝ Ա, Բ, Գ), իրականում Սյունեցու «Երգ երգոցն» է, որի շատ հատվածներ երգվել են: «Աղամգիրք»-ը Առաքել Սյունեցու գեղարվեստական մտքի կիզակետն է, որտեղ հետևելով Գրիգոր Նարեկացու բառաստեղծական ավանդույթին՝ Սյունեցին կազմել է շուրջ վեց տասնյակ նորակազմ բայեր, գոյականներ, ածականներ և մակբայներ,

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԳ) քաարի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015

ՎԷՎ համահայկական հանդես

բացի այդ՝ առաջին անգամ գործածել իր ժամանակի համար նոր փոխառություններ:

Բնորոշ է, որ Սյունեցին իր ստեղծագործության մեջ օգտագործել է ամենատարբեր բառաշերտերին պատկանող բառեր՝ բարձր գրաբարյանից մինչև միջինհայերենյան, բարբառային, նաև վաղաշխարհաբարյան բնիկ բառերին միահյուսել է ժողովրդական նոր փոխառություններ: Այս կերպ Սյունեցին ձգտել է իր խոսքը դարձնել առավել հասցեական, ժողովրդին հասկանալի: Միաժամանակ ակնհայտ է առօրեականի բանաստեղծականացման միտումը: Հոգևորական գրողի համոզմամբ, ամեն ինչ, ամեն բառ կարող է դառնալ քնարերգության նյութ, եթե կիրառողն ունի համապատասխան շնորհ: Զորօրինակ՝ բարձրաձոճ **հրաշագին, հրաշափայլել, չքնադացեղ, պայծառամիտ, պայծառասքանչ, լուսահոսուն, լուսաթափանց, գվարթագեղ** և նման այլ պերճ նորակազմությունների հետ մեկտեղ Սյունեցին իր պոեմում օգտագործում է **լօլոսել** (**լոլոգել**-ի տարբերակն է, որ նշանակում է **խաբխբել, ուղեղը լվանալ**, իսկ ուղղակի իմաստով՝ **պրորել, ձևը փոխել, փափկեցնել**), **քալ** (վրացական փոխառություն է՝ **կին, աղջիկ**), **մել** (սա շատ հետաքրքիր բառ է, Առաքել Սյունեցու առաջին հետազոտողներից Մ. Պոտուրյանն³ այն բացատրում է որպես **պարճառ, առիթ**, Հ. Աճառյանն իր «Գավառական բառարանում» համարում է **հոյս** բառի համարժեքը, բայց ավելի ուշ հայագետն այս բառը բխեցնում է ռուսերեն **милость** բառից՝ համարելով այն ռուսերենից կատարված վաղաշխարհաբարյան փոխառություն: Ա. Մաղոյանը ևս այս տարբերակին է հակվում՝ նշելով, որ **մել** բառը հանդիպում է նաև Արցախի մելիքների ու ռուսաց արքունիքի գրագրություններում (որպես աղբյուր նշվում է Սանկտ Պետերբուրգում 1898 թ. հրատարակված փաստաթղթերի ժողովածուն⁴):

Հետաքրքիր օրինակ է նաև **խալբալենալ**-ը: Այն թուրքական փոխառյալ **խալբալ** հիմքից ստեղծված բայ է, **խալբալ** նշանակում է **աղեպ, փորձանք**, նորակազմ բայն ունի **փչացնել, աղեպի մաքրել** իմաստները, ՄՀԲ-ում վկայված է **խալբալել** պարզ բայը: Սյունեցին փոխառյալ բայահիմքին հավելել է **են** սուկածանցը՝ ստեղծելով անկատար կերպի նոր բայ: Ժողովրդախոսակցական բառաշերտից է **մեղմելս**-ը: Ս. Մալխասյանի բառարանում այս բառը տրվում է մեռած նշումով՝ **նենգավոր, կեղծավոր, շողորորթ** նշանակությամբ: Նմանատիպ փոխառություններ են **վաշա**-ն (նշանակում է **փառք, օրհնություն**), **չէչ**-ը, որը միջինհայերենյան բառ է, այն Ս. Մալխասյանն իր բառարանում բարբառային նշումով է բերում՝ **մրգի կամ այլնի մնացուկ, փակիչք** իմաստներով, կամ **նալաթ**-ը. սա միջինհայերենյան փոխառություն է արաբերենից՝ **նզովք, բանադրանք** իմաստներով:

Յուրօրինակ է նաև խաչի հնագույն պաշտամունքի արձագանք 4 թվի սրբացման Սյունեցու միտումը. ավանդաբար, հեթանոսական ժամանակներից սկսյալ, սուրբ են համարվել 1, 3, 7, 9, 12, 40 թվերը, իսկ քրիստոնեության ջատագով հեղինակը, ելնելով քառաթև խաչի սրբությունից, որը նաև հին հույն փիլիսոփաների կողմից փառաբանված աշխարհի

3 Տե՛ս Մ. Պոտուրյան, Աղանգիրք Առաքել Սյունեցու, Վենետիկ, 1907, Մ. Պոտուրյան, Առաքել Սյունեցի և իր քերթվածները, Վենետիկ, 1914:

4 Հմմտ. Դ. Ա. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, էջ 402- 403:

արարման 4 հիմնային տարրերի վաղնջական խորհրդանիշն է, պոեմում **չորեք և քառ** բաղադրիչներով բազմաթիվ բառեր է կիրառում՝ **չորեք-փարրեայ, չորեքկուսան, չորեքնիթեայ** (Առնել Ադամ չորեքնիթեայ), **չորեքօրեայ** (Յարոյց գՂազար չորեքօրեայ), **չորեքկերպեան** (Աթոռ ահեղ չորեքկերպեան, յորում յանգչեր երկնից արքան), **քառաթևեան** (**Քառաթևեան իսաչն կանգնած**), **քառանիթեայ** (Ստեղծողն բնութեանս քառանիթեայ):

Սյունեցու գործածած բնիկ և փոխառյալ նոր բառերը հիմնականում պատկանում են զգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով), խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռումներ արտահայտող իմաստային-թեմատիկ խմբին: Նման հասկացություններ նշանակող բառերի առատությունն ուղղակիորեն պայմանավորված է պոեմի հիմնական նպատակադրմամբ՝ չարիքի դատապարտում իր բոլոր դրսևորումներով և բարության փառաբանում: Այս թեմատիկ խմբում կան և՛ գոյականներ, և՛ բայեր, և՛ ածականներ, և՛ մակբայներ, օրինակ՝ **Ադամգիրք, աղծրություն, տանջանարան, վերջաբանություն, լուռուել, հրաշափայլել, խալբալել, այլևայլել, խայտագրել, մաղձաժայթքել, անձառակերպ, անուշիմ, արտասուեղ, գեհենակուր, դառնամրուր, դառնալի, ժանգանման, ժանգալի, լուսահոսան, ձանձրախորհուրդ, չքնաղացեղ, պայծառամիտ, պայծառասքանչ, օրհներգաբան, չարաչարք, ոտանավորաբար** և այլն:

Առաքել Սյունեցու նորակազմություններն առանձնանում են ոչ միայն իրենց իմաստային բեռնվածությամբ, այլ նաև հեղինակի կիրառած բառակազմական միջոցների բազմազանությամբ, ձևաբանական արժեքով: Վերլուծենք Սյունեցու ստեղծած բառերը նաև ըստ խոսքիմասային պատկանելության: «Ադամգրքում» մենք գտել ենք 10 նորակազմ **գոյական**: Ներկայացնենք դրանք ըստ իմաստների.

1. **Ադամգիրք**– առաջին մարդու կյանքի պատմությունը, ողիսականը,
2. **Աթենակոյս**–աստվածուհիի, Աթենասը,
3. **աղծրություն**– դևերին բնորոշ համ, ըստ ամենայնի՝ դառնաղի,
4. **դասասաց**– խորհրդատու, վարդապետ,
5. **ելուն**– դուրս եկած մաս,
6. **հարցաբանում**– հարցապնդում, հարցաքննում,
7. **մարանապան**– մառանի պատասխանատու, մառանապետ,
8. **պարակցում** – միավորում, համատեղում,
9. **տանջանարան**– տառապանքների վայր, դժոխք,
10. **վերջաբանություն**– հանգուցալուծում:

13 բայ՝

1. **Այլևայլել**– ՆՀԲ–ում առկա է միայն **այլ և այլ** ածականը «զանազան, պէսպէս, տարբեր» իմաստներով, Սունեցին ածականից ստեղծում է բայ և նրա ենթակայական դերբայը՝ **այլևայլող**, ունի **փոփոխվել, փոխակերպվել** իմաստները:

2. **Երևենալ**– բառարաններում վկայված է **երևել/իմ, երևանալ** բայը, Սյունեցին կազմում է **են** սուկածանցով նույնիմաստ բայ՝ «**հայտնվել, նկատվել**» նույն իմաստով, բայց ավելի բարեհունչ՝ **ե** ձայնավորների

առձայնությամբ:

3. **Եօթնապատկել** – ՄՀԲ-ում վկայված է *յօթնապարիկ* մակբայը, իսկ բայական տարբերակը նորակազմություն է՝ «**յոթ անգամ ավելացնել յօթնապատիկ դարձնել**» նշանակություններով:

4. **Խալբալենալ**– աղետի ենթարկել, փորձանքի մատնել:

5. **Խայտագրել** – խայտանքով, բերկրությամբ նկարագրել:

6. **Լօլոսել** – խաբխբել, մոլորեցնել:

7. **Կիսատել**– ՆՀԲ-ում հանդիպում է *կիսապ* ածականը՝ «**կիսահապ, կրճարեալ, անկարապ**» իմաստներով: Այս ածականից կազմված բայն ունի «**կիսապ, թերի դարձնել, կտրել**» նշանակությունները:

8. **Հրաշափայլել/իմ** – ՆՀԲ-ում առկա են *հրաշափայլ* ածականը և *հրաշափայլություն* գոյականը («**հրաշալի փայլումն, գերապայծառությունն**»), իսկ բայը նորակազմ է՝ **գերափայլել, ճառագել** իմաստներով:

9. **Մաղձաժայթթել** – ՄՀԲ-ում առկա է միայն *մաղձաժայթթող* ենթակայական դերբայը՝ **թունահեղ** նշանակությամբ, Սյունեցու կիրառած բայն ունի **թայն թափել** նշանակությունը:

10. **Մատնահարել/իմ** – ՆՀԲ-ում ունենք *մափնահար/մափնեհար/մափանահար* գոյականը, որն ունի «**մափանի, որ հարկանէ, դրոշմէ զկնիք, կնիք մափանոյ**» իմաստները: Սյունեցու կազմած բայն ունի «**դրոշմել, կնքել**» նշանակությունները:

11. **Պատուտել/իմ**– ՄՀԲ-ում Ա.Սյունեցու վկայակոչմամբ բերված այս բայը նշանակում է «**պարուրել**»:

12. **Վերաբուրել**– ինքնատիպ նորակազմություն է «**վերաբին, կրկին բուրել**» նշանակությամբ:

13. **Քակտակել**– ՆՀԲ-ում տրված են *քակտիմ* բայը («քակելով քակել, քանդել, լուծանել, խախտել, աւերել, եղծանել»), քակտական/քակտելի ածականները («որ կամ ունի քակտիլ, լուծանելի, բաժանելի՝ որպէս զբաղադեալն»): Ըստ երևույթին *քակտիմ* բայի այս հոմանիշ ձևը կազմել է **ակ** ածանցի հավելմամբ, որը գործողությանը բազմապատկական, սաստկական երանգ է հաղորդում:

Հեղինակային նորակազմությունների հիմնական մասը սովորաբար **ածականներ** են, Սյունեցու այս պոեմում գտել ենք 31 ածանցավոր և բարդ ածական՝

1. **Անգոց** – անպարփակ, անըդգրկելի:

2. **Անձառակերպ** – ՆՀԲ-ում վկայված է միայն *անձառ* ածականը, որի հոմանիշն է *անձառակերպ* գեղեցիկ նորակազմությունը՝ «**անձառելի, անպարմելի, աննկարագրելի**» իմաստներով:

3. **Անուշալի** – ՆՀԲ-ում տրված են *անոյշ* և *անուշ* ածականները՝ «**քաղցր, համեղ անուշահոտ, չունօղ կծուութիւն կամ դառնութիւն, լայնաբար՝ լաւ, հաճոյական, ախորժ, ազնիւ**» իմաստներով: **Անուշալի**-ն ՆՀԲ-ում նշվածների հետ հոմանշային շարք է կազմում:

4. **Անուշիմ** – անգիտակ, անուշադիր: ՆՀԲ-ում առկա է միայն այս ածականի հակահիշը՝ **ուշիմ**:

5. **Արտասուեղ** – արտասվալի, արցունքաբեր: **եղ** ածանցը հայերենում միշտ արտահայտել է «ինչ-որ բանով լի, լեցուն» իմաստը: Նորակազմությունը ստեղծվել է հանգավորման համար՝ որպես **հանձարեղ**,

համեղ, անմեղ բառերի հանգակից:

6. **Գեհենակուր** – ՆՀԲ-ում տրված են **գեհեն** («դժոխք») և **կուր** («կերակուր գազանացո») առանձին արմատները, որոնց միացումով էլ Սյունեցին ստեղծել է **գեհենակուր** ածականը՝ «դժոխքի բաժին դարձած» նշանակությամբ:

7. **Դառնագին** – հոմանիշն է ՆՀԲ-ում վկայված **դառնալի** ածականի, ունի «**հույժ, չափազանց դառն**» իմաստը:

8. **Դառնամբուր** – **դառն** և **մբուր** բառերով կազմված այս նորակազմ ածականն ունի «**դառը նարվածք ունեցող, դառնաթանձրուկ**» նշանակությունը:

9. **Դժնային** – ՆՀԲ-ում առկա է **դժնի** ածականը, որի հոմանիշն է **դժնային** նորակազմ այս ձևը՝ «**չարաչար, դժնդակ**» իմաստներով:

10. **Դժպահակ** – Ինքնատիպ ածանցավոր կազմություն է՝ «**անընկալելի, անիմանալի**» նշանակությամբ:

11. **Դիւրահաձ** – Բարդ այս ածականը նշանակում է «**հեշտությամբ դուր եկող, գրավող, դյուրող**»:

12. **Զուարթագեղ** – զվարթ գեղեցկությամբ օժտված, պայծառագեղ:

13. **Ժանգանման** – ժանգի տեսք ունեցող, քայքայիչ:

14. **Ժանգալի** – ժանգապատ, քայքայվող:

15. **Լուսափայլուն** – ՆՀԲ-ում տրված են **լուսափայլ** և **լուսափայլեան** հոմանիշ ածականները՝ «**լուսով կամ որպէս լոյս փայլեալ, լուսապայծառ, շողշողեալ, պայծառ, մարուր, հալոսկ, պարզ**» նշանակություններով: Սյունեցին հարստացնում է հոմանշային այս ճոխ շարքը՝ ստեղծելով **լուսափայլուն** տարբերակը:

16. **Լուսաթափանց** – նորարան այս ածականը իմաստով մոտ է վերոնշյալ կազմությանը՝ «**լոյսի պէս թափանցիկ, եթերային**» իմաստով:

17. **Լուսահոսան** – լոյսի պէս հորդացող, պայծառացնող, լուսավորող:

18. **Խեռային** – ՄՀԲ-ում առկա է **խեռական** տարբերակը՝ «**անսանձ, րմբուր**» նշանակություններով: Հեղինակը կազմել է վերջինիս հոմանիշը – **ային** ածանցով:

19. **Հառաչալիք** – **հառաչանքներով լի, տառապագին**:

20. **Հրձուածայն** – **զվարթածայն, ցնծալի**: Սյունեցու երկում հրեշտակներին՝ զվարթուններին, տրվող բազմաթիվ որոշիչներից մեկն է:

21. **Ձանձրախորհուրդ** – տաղտկամիտ, ծանրամիտ, **անուշիմ** նորակազմության հոմանիշն է՝ նույն տողում գործածված, որի կողքին մեկ այլ նորակազմ հոմանիշ բառ է գործածված **ձանձրամիտ՝ խորհուրդ>միտ** արմատների փոփոխությամբ, որը գեղեցիկ բառախաղ է ստեղծում:

22. **Ձանձրամիտ** – ձանձրախորհուրդ, տաղտկամիտ:

23. **Յուսացուցիչ** – ՆՀԲ-ում հիշատակված է միայն **յուսացուցանել** բայը՝ «**բալ յուսալ, վստահացուցանել**» իմաստներով: Նորակազմ ածականն ունի «**վստահեցնող, հուսադրող**» նշանակությունը:

24. **Ողորագին** – ՆՀԲ-ում առկա են **ողոր** և **ողորական** ածականները՝ «**աղերսական, փաղաքշական, համոզական**» նշանակությամբ: **Ողորագին** կազմությունը համալրում է հոմանշային այս շարքը:

25. **Չարուբարի** – այս ածականն իր մեջ համատեղում է «**ն՛ չարը, ն՛**

բարին կրող» իմաստները:

26. **Չքնադացեղ** – գեղեցիկ, ազնվագարն: Աղամին գայթակղած մեղքի պտղին տրվող հոմանիշներից է, որ մատուցեց եվան:

27. **Պղնձահոտ** – պղնձից հոտ ունեցող: **Ժանգանման** ածականի հետ է գործածված՝ որպես մեղքին տրվող բացասական մակդիր:

28. **Պայծառասրանչ** – հիասքանչ, սքանչելի: Այս ածականը վկայված է ՄՀԲ-ում՝ Սյունեցու վկայակոչմամբ:

29. **Պայծառամիտ** – **հանձարեղ** բառի նորակազմ հոմանիշն է՝ Աստուծուն տրված բազմաթիվ մակդիրներից մեկը:

30. **Օձատիպ** – օձանման, օձաբարո, անհաւատ:

31. **Օրհներգաբան** – օրհներգ երգող, փառաբանող. հրեշտակ-զվարթուններին տրվող մակդիր է:

Գտել ենք **2 մակբայ՝**

1. **Չարչարք** – նորակազմ այս մակբայն ունի «**հոյժ չարք**» իմաստը, որտեղ **ք-**ն արդեն ածանց է, ոչ թե հոգնակերտ՝ «**չարչարք նիւթեաց**»:

2. **Ուտանավորաբար** – բանաստեղծորեն, չափածո:

Ընդհանուր առմամբ 56 նորակազմություն, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում, Միջին հայերենի բառարանում (ՄՀԲ), դրանցից 5-ը ՄՀԲ-ում նշված են, բայց միայն՝ Առաքել Սյունեցու վկայակոչմամբ, այսինքն՝ աներկբա այս հեղինակի գրչին պատկանող նորակազմություններ են: Կառուցվածքային տեսանկյունից Սյունեցին գործուն կիրառել է ն՝ ածանցումը, ն՝ բառաբարդումը: Նախաձանցներից նախապատվությունը տվել է **ան-**, **դժ-**, **վեր**, **պար-** ածանցներին, իսկ վերջաձանցներից՝ **-արան**, **-ային**, **-ալի**, **-բար**, **-գին**, **-իչ**, **-ութին**, **-ում**, **-ուն** մասնիկներին: Բայական ածանցներից Սյունեցին 2 անգամ կիրառել է **են** սուկածանցը՝ ստեղծելով իր ժամանակի բառարաններում վկայված բայերից տարբերվող կազմություններ՝ **խայբալենալ** (ՄՀԲ-ում կա **խայբալել**), **երևենալ** (գրաբարում կային **երևանալ** և **երևել/իմ** ձևերը), իսկ մի անգամ **ակ** ածանցը բազմապատկական նշանակությամբ՝ **քակտակիմ**: Բարդությունները հիմնականում հոդակապավոր են, եզակի օրինակներով՝ կրկնավորներ, կան նաև բաղիյուսական բարդություններ:

Ա. Սյունեցու մեր քննած նորակազմությունների կեսից ավելին այսօր էլ կիրառելի է արդի հայերենում, հատկապես՝ բանաստեղծական բարձր ոճերում, վկայված է ժամանակակից բառարաններում, մի իրողություն, որն ապացուցում է նրա բառաստեղծական տաղանդի վերժամանակյա ուժը:

Նարինե Հ. Դիլբարյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբարն իր գրական երկու ձյուղերով՝ արևելահայերեն, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմության հիմնահարցերը, հատկանվանագիտությունը, ի մասնավորի՝ տեղանվանագիտությունը: Հեղինակ է լեզվաբանության այս բնագավառներին առնչվող գրքերի և բազաթիվ հոդվածների:

Summary

NEWLY FORMED WORDS IN ARAKEL SYUNETSY'S "ADAM'S BOOK" ("ADAMGIRQ")

On the way from heaven to hell and back to heaven

Narineh A. Dilbaryan

Key words – Arakel Syunetsi, XIV–XV century, poem “Adam’s book”, vocabulary, new words, borrowed root, 10 nouns, 13 verbs, 30 adjectives and 2 adverbs.

Arakel Syunetsi was an Armenian religious famous figure, a poet, a grammarian, a musician, a philosopher and a theologian XIV–XV century. In this article we analyzed the new words in the poem “Adam’s book”, which is not in the dictionaries of the Old and Middle Armenian languages. This poem is about the exile of Adam and Eva from Paradise, the first sin and of Repentance. Syunetsi created 57 newly formed words. These words he created on the basis of Armenian and borrowed roots: 11 nouns, 13 verbs, 31 adjectives and 2 adverbs. Most of these words are used in the vocabulary of the modern Armenian, that is an evidence of the brilliant talent of Arakel Syunetsi.

Резюме

НОВООБРАЗОВАННЫЕ СЛОВА В «КНИГЕ АДАМОВОЙ» («АДАМГИРК») АРАКЕЛА СЮНЕЦИ

По дороге из рая в ад и обратно в рай

Нарине А. Дилбарян

Ключевые слова – Аракел Сюнеци, XIV–XV века, поэма “Адамова книга”, лексика, неологизмы, новообразованные и заимствованные слова, 10 существительных, 13 глаголов, 30 прилагательных, 2 наречие.

Аракел Сюнеци был известным армянским религиозным деятелем, поэтом, грамматиком, музыкантом, философом и теологом XIV–XV веков. В данной статье мы анализировали новообразованные слова в поэме Аракела Сюнеци «Книга Адамова». Эти слова не упоминаются в словарях грабара (древнеармянского) и среднеармянского языков. «Книга Адамова» – это поэма об изгнании Адама и Евы из рая, о первородном грехе и последующем покаянии. Сюнеци создал 57 слов на основе армянских и заимствованных корней, из которых 11 существительных, 13 глаголов, 31 прилагательных и 2 наречия. Большинство этих новообразованных слов и по сей день употребляются в лексике современного армянского языка, что является свидетельством яркого словотворческого таланта А. Сюнеци.

ՀԵՅՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

հուլիս-սեպտեմբեր, 2015
հիմնադրամատյանի 1 (49) համար

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ